ԿԱՆԱԴԱՀԱՅ ԼՐԱԳՐՈՂ ԺԻՐԱՅՐ ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆԻ (ԹԻՒԹԻՒՆՃԵԱՆ) ԲՈՂՈՔԸ BBC-ԻՆ

Posted on August 24, 2020 by Keghart



Category: Opinions

BBC-ի HARDtalk-ի միակողմանի և շեշտված կերպով հակահայ հարցազրույցի կապակցությամբ սույն բողոքագիրն առաջարկում ենք փոխանցել ձեր շրջապատին: Այսու, ընդառաջելով մեր հայրենակիցների փափաքին, վաստակաշատ կանադահայ հայտնի լրագրող Ժիրայր Թութունջյանի գրությունը՝ ուղված BBC-ի HARDtalk-ի խմբագրության ու անգլիախոս հասարակության, ներկայացնում ենք արևելահայերենով, որպեսզի այն ավելի մատչելի լինի առավել լայն շրջանակների համար: Մենք կարևորում ենք այս քայլը, քանի որ սա երկրորդ անգամն է, ինչ BBC-ի HARDtalk-ը հարձակվում է Հայաստանի կառավարության վրա և համարձակվում է երգիծել մեր ազատագրական պայքարն ու հարցականի տակ դնում սահմանի վրա հայ բանակի տարած հաղթանակը: Հարցազրույցի կատարածու Ստեֆան Սակուրը, ըստ երևույթին, «օրինակելի» հակահայ է: Վստահ ենք, որ նա մի կոկիկ «շնորհակալություն» ստացավ Ադրբեջանի նախագահ Ալիևից:

<u>Այս պահին մեր նպատակը չէ գնահատել կամ քննարկել Վրչ. Ն. Փաշինյանի պատասխանն ու ներքին կամ արտաքին քաղաքականությունը:</u>

Պր. Ժիրայր Թութունջյանն ապրում է Տորոնտոյում և keghart.org-ի խմբագրության երիցագույն անդամն է: Թարգմանությունը՝ Մինաս Գոճայեանի, Լոս Անջելոս

Keghart.org-ի խմբագրություն

---

14 օգոստոսի, 2020 թ

Բողոքների Բաժին BBC
Լոնդոն, Մեծ Բրիտանիա

Հարգելի պարոն / տիկին,

Ես կցանկանայի դժգոհությունս հայտնել Պր. Ստեֆան Սակուրի (HARDtalk) հարցազրույցի կապակցությամբ, որը վերաբերում է Հայաստանի վարչապետ Փաշինյանի հետ կատարված հարցազրույցին:

Պր. Սակուրը համբավավոր է որպես «կոշտ» (hard) հարցազրույց վարող լրագրող (դա երևաց նաև նախորդ հարցազրույցի ընթացքում ՀՀ Արտգործ նախարար Պր. Զ. Մնացականյանի հետ): Դա փաստվեց նրա վարքագծից, երբ կտրուկ կերպով խանգարեց Պր. Փաշինյանի պատմական կարճ ակնարկը: Նա «կոշտ» էր և զինված էր Հայաստանի հանդեպ թշնամանքով և այն հարցադրումներով, որոնք պատրաստել էին նրա արտադրողն ու խմբագիրները:

Նա , պարզ ասած, կոպիտ էր, երբ ակնհայտորեն նախընտրում էր իր հարցազրույցի

եղանակին կառչել: Վստահ եմ, որ միևնույն Պր. Սակուրը Պր. Նեթանյահուի հետ կվարվեր մանկական ձեռնոցներով ՝ վախենալով աշխատանքը կորցնելուց: Բայց Հայաստանի հետ, որը «փոքր», աղքատ և շրջափակված երկիր է, հեշտ է ունենալ հարձակողական ոճ, մանավանդ որ Հայաստանի ղեկավարը չունի կամ դեռևս չի ունեցել անգլերենի բարձր մակարդակ, մի բան, որ Պր. Սակուրը վայելել է ձեր հանրային դպրոցներից մեկում:

Դեռևս հարցազրույցի սկսվելուց առաջ, Պր. Սակուրը բացահայտեց իր հակահայ և հակա-փաշինյան կողմնակալությունը, երբ նա հարցազրույցը «վերնագրեց» հետևյալ հարցով. «Արդյո՞ք Հայաստանը զբաղված է հին մարտեր մղելով», մի բան, որը ոչ մի արհեստավարժ (պրոֆեսիոնալ) լրագրող պետք չէ ներկայացնի առանց ապացույցների կամ հարցազրույցից առաջ: Ո՞րն է հարցազրույցի իմաստը, երբ արդեն ունեք պատասխանները...: Հռետորական հարցի նպատակն էր, հեռուստադիտողներին ասել, որ «Հայաստանը վատ տղա է» և հղի է հետևյալ ծածկամտություններով.-

Ա) Հայաստանը հետադիմական երկիր է (ռեակցիոն)
Բ) Հայերն ու նրանց կառավարությունը հետամնաց են
Գ) Հայերը ոչ միայն ռազմատենչ են, այլև իրենք պետք է սկսած լինեն Ադրբեջանի հետ վերջերս տեղի ունեցած մարտերը
Դ) Հայերը վրեժխնդիր են
Ե) Հայերը խնդիրներ են առաջացնում
Զ) Հայերը ճկուն չեն և համառ են
Է) Հայերը ռևանշիստ են
Ը) Եթե Հայաստանի և Ադրբեջանի կամ Թուրքիայի միջև պատերազմ սկսվի, մենք (Անգլիան) պետք է չեզոք մնանք, քանի որ Հայաստանն իրավունք չունի մեր օգնության:

Երբ Փաշինյանը փորձեց բացատրել արցախա-ղարաբաղյան հակամարտության պատճառը, Պր. Սակուրը փութաց ընդմիջել նրան: Նա չցանկացավ Պր. Փաշինյանին հնարավորություն տալ բացատրելու հակամարտության բուն պատճառը: Այսպես, երբ վարչապետը սկսեց հին հույն պատմիչներից, թե Արցախը եղել է հայկական տարածք դեռևս մ.թ.ա. 6-րդ դարում և տարածքի անունը այն ժամանակ եղել էր Արցախ, Պր. Սակուրը փորձեց երգիծել, որ հայ ազգայնականներն են իբր փոխել Լեռնային Ղարաբաղի անունը (ի դեպ, գաղութարարական քաղաքականության արդյունքում Արցախը կոչվել էր Ղարաբաղ): Պատմությունից ոչինչ հասկացող Պր. Սակուրը չի իմանում կամ չի ուզում ընդունել, թե հայերը պարզապես վերականգնել են պատմական բուն անունը:

Արցախը Հայաստանի մաս էր կազմում այն ժամանակ, երբ ադրբեջանցիները, այսինքն թուրքերը նույնիսկ գոյություն չունեին աշխարհի այդ տարածքում: 1918 թ.-ին Ադրբեջանը հօրինվեց բոլշևիկյան Ռուսաստանի կողմից: Թուրք-ազերիական կեղծիքը

պնդում է, թե Հայաստանը Ադրբեջանի մաս է և պետք է կոչվի Արևմտյան Ադրբեջան...

Ես զարմացած չեմ Պր. Սակուրի մակերեսային գիտելիքների վրա: Այսպես կոչված «աստղային» շատ լրագրողներ նախ և առաջ կատարողներ են (աւելի ճիշտ՝ կատարածու), ապա լրագրողներ: Պր. Սակուրը իսկական նմուշ է այսպիսի լրագրողների: Նա նույնքան խորն է, որքան զուգարանի թուղթը և, ըստ երևույթին, ունի ձկնիկի հիշողություն:

Վերջապես, Արցախը (որի բնակչության 90 տոկոսը հայ է եղել) Լենին / Ստալինը հանձնեցին Ադրբեջանին՝ Թուրքիայի բարեհաճությունը վաստակելու համար, քանի որ ԽՍՀՄ-ը ցանկանում էր իր կողքին ունենալ Աթաթուրքի Թուրքիան: Նրանք նաև ադրբեջանցիներին տվեցին ևս մեկ հայկական շրջան՝ Նախիջևանը: Ադրբեջանի կողմից կառավարման 70 տարիների ընթացքում Ադրբեջանը փորձեց փոխել Արցախի ժողովրդագրությունը `այնտեղ տեղավորելով ադրբեջանցիներին: Երբ Խորհրդային Միությունը քայքայվում էր, արցախահայությունը քվեարկեց զատվելու օգտին ազրբեջանական ճնշող, փտած (կոռումպացված) և խորթ պետությունից: Բաքուն պատերազմ հայտարարեց և սանձազերծեց Ադրբեջանում ապրող հայերի ջարդերը: Դա այն ժամանակ էր, երբ Հայաստանը հասավ արցախահայության փրկության: Ի դեպ, երբ ԽՍՀՄ փլուզվեց, Նախիջևանի հայկական շրջանում մնացել էր 17 հայ: Նախորդ տասնամյակների ընթացքում ադրբեջանական հետապնդումների արդյունքում հայերը ստիպուել էին տեղափոխվել Հայաստան:

Հ. Գ.

Առ ի օգուտ Պր. Սակուրին , , թե «հարցազրույց» նշանակում է կարծիքների փոխանակություն, մինչ նա իր տեսակետներն ամուր էր պահում իր գրառման պահոցում: Նրան չէր հետաքրքրում Պր. Փաշինյանի տեսակետները, կամ թե արդյո՞ք նրա հեռուստադիտողները հետաքրքրված կլինեին, թե ինչ պիտի ասեր Պր. Փաշինյանը:

There are no comments yet.